ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/58

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Պրոթերմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Բողոք բերող «Պրոթերմ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Չատինյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19» ծածկագրով գնանշման հարցում, «ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրման ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Պրոթերմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 05.08.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ««ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. օգոստոսի 2-ի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 05.08.2019թ.-ին:

06.08.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 14.08.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 14.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.08.2019թ.-ին:

2. **<u>«Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Պրոթերմ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19 ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. օգոստոսի 2-ի թիվ 7 արձանագրության 3-րդ կետի (Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի թիվ 1062 առ 02.08.2019թ-ի հրամանի և դրա համար որպես հիմք ներկայացված փաստաթղթերի բովանդակությանը, որոշեց՝ առաջադրելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով ընթացակարգը հայտարարել չկայացած) որոշման դեմ:

Բողոքի առարկան.

2019թ. օգոստոսի 2-ի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի՝ (Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով <<ՀԱԷԿ>>ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի թիվ 1062 առ 02.08.2019թ-ի հրամանի և դրա համար որպես հիմք ներկայացված փաստաթղթերի բովանդակությանը, որոշեց՝ առաջադրելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով ընթացակարգը հայտարարել չկայացած>>) կայացված որոշումը:

Բողոքի փաստական հիմքերը.

“ՀԱԷԿ” ՓԲԸ-ի կարիքների համար ՀԱԷԿ>> ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով ծառայությունների մատուցման նպատակով 10.05.2019թ. հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ:

Գնման ընթացակարգին 17.05.2019թ-ին մասնակցել է երկու ընկերություն “Պրոթերմ” ՍՊԸ-ն և <<ՀԱՏՈՒԿԷՆԵՐԳԱՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ և <<ԻնտերԴորՍերվիս>> ՍՊԸ կոնսորցիումը:

2019թ. մայիսի 20-ին “Պրոթերմ” ՍՊԸ-ի տնօրենը տեղեկացնում է պատվիրատուին, որ <<ՀԱՏՈՒԿԷՆԵՐԳԱՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ և <<ԻնտերԴորՍերվիս>> ՍՊԸ կոնսորցիումը գնային առաջարկը ներկայացրել է սխալ՝ այն է լինելով համատեղ պայմանագրի կողմ գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ դաշտը լրացնելու:

2019թ. մայիսի 20-ին թիվ 2 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը <<ՀԱՏՈՒԿԷՆԵՐԳԱՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ և <<ԻնտերԴորՍերվիս>> ՍՊԸ կոնսորցիումի ԱԱՀ-ի պահով պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ Ֆինանսների

Նախարարություն (արդյոք կոնսորցիումի պայմանագրով հանդես եկողը համարվում է ԱԱՀ վճարող, թե՝ ոչ):

2019թ. հունիս 6-ին <<ՀԱԷԿ>>ՓԲԸ-նն է տրամադրվել <<Պրոթերմ>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊԵԿ կատարված հարցման պատասխանը (արդյոք կոնսորցիումի պայմանագրով հանդես եկողը համարվում է ԱԱՀ վճարող, թե՝ ոչ):

2019թ. հունիս 10-ին <<ՀԱԷԿ>>ՓԲԸ-ին է տրամադրվել <<Պրոթերմ>>ՍՊԸ-ի կողմից ՀՀ Ֆինանսների Նախարարության կատարված հարցման պատասխանը (արդյոք կոնսորցիումի պայմանագրով հանդես եկողը համարվում է ԱԱՀ վճարող, թե՝ ոչ):

2019թ. հունիսի 24-ին թիվ 3 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը ստանալով ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը՝ <<ՀԱՏՈՒԿԷՆԵՐԳԱՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ և <<ԻՆՏԵՐԴՈՐՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել, միաժամանակ պահանջել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

2019թ. հուլիսի 8-ին թիվ 4 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը <<Պրոթերմ>> ՍՊԸ-ն ճանաչել է ընտրված մասնակից և առաջարկել կնքել պայմանագիր:

2019թ. հուլիսի 19-ին <<Պրոթերմ>> ՍՊԸ-ի կողմից <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին է ներկայացվել իր իսկ կողմից ստորագրված և կնիքված պայմանագիրը:

2019թ. օգոստոսի 2-ին թիվ 5 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով <<ՀԱԷԿ>>ՓԲԸ-ի տնօրենի թիվ 1062 առ 02.08.2019թ.-ի հրամանը ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը)

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

Համաձայն ‹‹Գնումների մասին›› ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի. ‹‹Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:››:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի. ‹‹Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին»:

Տվյալ դեպքում հիմք ընդունելով վերը նշված հոդվածների պահանջները ներկայացնում եմ սույն բողոքը:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետի՝ <<...հրավեր՝ պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ>>-ն է և նույն հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի՝ <<... հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ>>-ն է: Այսինքն՝ օրենքում հստակ նշված են հրավերի և հայտի բացատրությունները, որոնք էլ համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածում տեղ գտած օֆերտայի հասկացությանը. <<1. Օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ:

Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները:

2. Օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից: Եթե օֆերտայի հետկանչի մասին ծանուցումն ստացվել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետ միաժամանակ, ապա օֆերտան համարվում է չուղարկված:

Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս օֆերտան համարվում է ստացված այն պահից, երբ այն մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված տեղեկատվական համակարգ, կամ հայտնաբերել է հասցեատերը, եթե այն ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին>>: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նշենք նաև, որ <<Պրոթերմ>>ՍՊ ընկերությունը օֆերտայի հետկանչի մասին ծանուցում չի ստացել ո՛չ օֆերտան ստանալուց առաջ, ո՛չ էլ դրա հետ միաժամանակ, այսինքն՝ կարող ենք նշել, որ օֆերտայի հետկանչի մասին ծանուցումը համարվում է չուղարկված:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36 հոդվածի 1-իմասի՝ <<Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից...>>, այսինքն՝ եթե կա հանձնաժողովի որոշում, ապա պատվիրատուի ղեկավարը պարտավոր է կնքել այդ պայմանագիրը: Այս նորմը համարվում է իմպերատիվ նորմ:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449 հոդվածի 1-ին մասի՝ <<Պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն

ստանալու պահից>>, այսինքն՝ մայր Օրենսգիրքը հստակ սահմանում է, որ <<Պրոթերմ>>ՍՊ ընկերության կողմից ակցեպտավորված (ստորագրված) պայմանագրերը<<ՀԱԷԿ>> ՓԲԸ-նը տրամադրելու պահից համարվում է ստորագրված:

Վերոգրյալը նաև հիմնավորվում է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 14-րդ ենթակետով. <<...ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում...>>:

Վերոգրյալից հետևում է, որ առնվազն 21.07.2019թ.-ին թիվ 03/48 պայմանագիրը օրենքի ուժով համարվել է կնքված և այս պարագայում չի կարող կիրառվել ՀՀ Գնումների մասին օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Ավելին՝ 2019թ. օգոստոսի 2-ի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով (տվյալներ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին) հստակ նշված է չկայացած համարելու հիմքը՝ տնօրենի 02.07.2019թ.-ի թիվ 1062 հրաման: Նշենք, որ պետական փակ բաժնետիրական ընկերությունների ոչ մի տնօրեն լիազորված չէ հայտարարել գնման պահանջի վերացման մասին, այդ հրամանի կիրառկումը թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19 ծածկագրով հանձնաժողովի կողմից առնվազն խախտում է ՀՀ Գնումների մասին օրենքը:

Այսպես՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 58-րդ կետի << .... Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:>> պետական փակ բաժնետիրական ընկերությունների կոմից 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառումը կարող է բացառապես իրականացնել ընդհանուր կառավարումն իրականացնող լիազոր մարմնի ղեկավարը:

Համաձայն Բաժնետիրական Ընկերությունների Մասին ՀՀ Օրենքի 66 հոդվածի 1-ին մասի <<Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է... >>

Համաձայն ‹‹Նորմատիվ իրավական ակտերի մասին›› ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի. <<.... Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:....>>:

Վերոգրյալի ամփոփումից հետևում է, որ "ՀԱԷԿ"ՓԲԸ-ի կարիքների համար <<ՀԱԷԿ>> ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով ձեռքբերման թիվ 03/48 պայմանագիրն օրենքի ուժով համարվում է կնքված, իսկ հանձնաժողովի որոշումը՝ ապօրինի:»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ««ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. օգոստոսի 2-ի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշումը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.08.2019թ. գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 05.08.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 09.08.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից ս/թ մայիսի 10-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19» ծածկագրով «Գնանշման հարցում» ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք էր բերվելու ««ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով» ծառայությունը:

Գնահատող հանձնաժողովը, 08.07.2019թ ժամը 11:00-ին հրավիրված՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի ընթացքում, 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել է բավարար և վերջինիս ճանաչել ընտրված մասնակից, սակայն պայմանագրի կնքման և հրավերով սահմանված ծառայության ձեռքբերման անհրաժեշտությունը դադարել է գոյություն ունենալ, քանի որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերությունում հանձնաժողովի ներկայությամբ կատարվել է N4 տուրբոագրեգատի խտացուցիչների հովացման խողովակների փորձնական (ստուգողական) բարձր ճնշումային մաքրում և մաքրման արդյունքում արձանագրվել է առաջացած լուծույթում չլուծվող նստվածքների բացակայություն, որն էլ հիմք է հանդիսացել ««ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով» ծառայության ձեռքբերման գործընթացը դադարեցնելու և դրա փոխարեն կայանի անձնակազմի օգնությամբ իրականացնելու խտացուցիչների լվացում՝ խնայելով 28 990 000 (քսանութ միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 58-րդ կետի համաձայն, կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի որոշման հիման վրա:

«Հայկական ատոմային էլեկտրական» Փակ Բաժնետիրական Ընկերության գլխավոր տնօրեն Մ.Վարդանյանի թիվ 1062 առ 02.08.19թ հրամանի հիման վրա, օգոստոսի 2-ին ժամը 15:40-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ՝ գնման գործընթացը չկայացած հայտարարելու նպատակով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը (գնման գործընթացը չկայացած է համարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը) և հրաման արձակելու համար որպես հիմք ներկայացված փաստաթղթերը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով ծառայությունների մատուցման նպատակով 10.05.2019թ. հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ:

Գնման ընթացակարգին 17.05.2019թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել երկու ընկերություն «Պրոթերմ» ՍՊԸ-ն և «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն («ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն («ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) հայտը գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել, միաժամանակ «Պրոթերմ» ՍՊԸ-ին ճանաչել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից և առաջարկել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս առաջարկ է ներկայացվել կնքել պայմանագիր:

19.07.2019թ.-ին «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին է ներկայացվել իր իսկ կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն կատարել է N4 տուրբոագրեգատի խտացուցիչների հովացման խողովակների փորձնական (ստուգողական) բարձր ճնշումային մաքրում և մաքրման արդյունքում արձանագրվել է առաջացած լուծույթում չլուծվող նստվածքների բացակայություն, որն էլ հիմք է հանդիսացել ««ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԵՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով» ծառայության ձեռքբերման գործընթացը դադարեցնելու և դրա փոխարեն կայանի անձնակազմի օգնությամբ իրականացնելու խտացուցիչների լվացում՝ խնայելով 28 990 000 (քսանութ միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2019թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն տնօրենի թիվ 1062 առ 02.08.2019թ.-ի հրամանը, «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ «»Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 05.08.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե … դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 14-րդ կետի 6-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ... գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Կարգի 58-րդ կետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, ի թիվս այլոց, նաև եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համայնքի ավագանուն, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարին, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Երկկողմ (բազմակողմ) գործարքները կարող են կնքվել նույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված եղանակներով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը, կնիքով դրոշմված լինելը և այլն), և կարող են նախատեսվել այդ պահանջները չպահպանելու հետևանքներ (...): Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: (...) Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում, եթե պայմանագիր կնքելու գրավոր առաջարկն ընդունված է նույն օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

Օրենսգրքի 451-րդ հոդվածի համաձայն՝ օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ: Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները: Օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից: Եթե օֆերտայի հետկանչի մասին ծանուցումն ստացվել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետ միաժամանակ, ապա օֆերտան համարվում է չուղարկված:

Օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հասցեատիրոջ ստացած օֆերտան չի կարող հետ կանչվել դրա ակցեպտի համար օֆերտայում սահմանված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում, կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելը (ապրանքներ բեռնելը, աշխատանքներ կատարելը, ծառայություններ մատուցելը, համապատասխան գումար վճարելը և այլն) համարվում է ակցեպտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նշված չէ օֆերտայում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ պայմանագիրը՝ որպես գործարք, կարող է կնքվել բանավոր կամ գրավոր ձևով: Պայմանագրի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորման նպատակը պայմանագրի հիման վրա ծագող հարաբերություններն ավելի հստակ դարձնելն է, քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելը, պայմանավորված պայմանագրի տվյալ տեսակի բնույթով՝ ապագայում հնարավոր վեճերի կանխումը: Մասնավորապես՝ պայմանագրի կնքման բանավոր ձև նախատեսելու միջոցով քաղաքացիական շրջանառությունը չի ծանրաբեռնվում (օրինակ՝ կնքման պահին կատարվող գործարքները, որոնց համար հատուկ կարգավորում նախատեսված չէ, կարող են կնքվել բանավոր ձևով): Ինչ վերաբերում է գրավոր ձևով կնքվող գործարքներին, ապա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործարքների որոշ տեսակների համար հստակ նախատեսելով գրավոր ձև՝ օրենսդիրը կարևորել է այդ պայմանագրերը կնքված համարվելու համար որոշակի պահանջների պահպանումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետ, 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր): Սահմանելով գործարքի կնքման գրավոր ձև՝ օրենսդիրը նախատեսել է այդ ձևը չպահպանելու երկու հնարավոր հետևանք.

1) գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ չզրկելով գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից,

2) օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից պայմանագրի տվյալ ձևի համար սահմանված է գրավոր ձև՝ առանց ձևը չպահպանելու հետևանքները նշելու (օրինակ՝ կապալի պայմանագիր, հանձնարարության պայմանագիր, կոմիսիայի պայմանագիր և այլն), ապա գործում է վերը նշված 1-ին կանոնը: Վերը նշված իրավական հետևանքը կիրառվում է բացառապես վեճի առկայության դեպքում: Այսինքն՝ այն դեպքերում, երբ տվյալ գործարքը կնքված լինելու փաստը կողմերի կողմից չի վիճարկվում, ապա գործարքի հասարակ գրավոր ձևը պահպանված չլինելու հանգամանքն ինքնին որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում: Հետևաբար նշված հետևանքը դատավարական բնույթի է: Այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով հստակ նախատեսված է, ապա պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է անվավերության *(տե՛ս, Զարուհի Հայրապետյանը և Գայանե Ղազարյանն ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի թիվ*

ԵԿԴ/0556/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: ՀՀ վճռաբեկ դատարանը, բացահայտելով նշված հասկացությունների բովանդակությունը, արձանագրել է, որ «կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը, իսկ «կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այսինքն՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է *(տե՛ս, Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համխաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը)*:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ ինչպես ցանկացած պայմանագիր, ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պայմանագիրը ևս կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Այսինքն՝ ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունն պայմանագիր կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի կատարող-վաճառողի դեպքում՝ իր արտադրած, գնած ապրանքները կամ աշխատանքի և/կամ ծառայության արդյունքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) գնորդին հանձնելուն, իսկ գնորդի դեպքում՝ այդ ապրանքներն (աշխատանքը, ծառայությունը) ընդունելուն և դրանց համար որոշակի գումար վճարելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) իրավահարաբերության առկայության փաստն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ: Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները: Օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից:

Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով: Ըստ այդմ՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

Եթե օֆերտայի հետկանչի մասին ծանուցումն ստացվել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետ միաժամանակ, ապա օֆերտան համարվում է չուղարկված: Հասցեատիրոջ ստացած օֆերտան չի կարող հետ կանչվել դրա ակցեպտի համար օֆերտայում սահմանված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում, կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Ե խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով ծառայությունների մատուցման նպատակով 10.05.2019թ. հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ:

Գնման ընթացակարգին 17.05.2019թ-ին մասնակցության հայտ է ներկայացրել երկու ընկերություն «Պրոթերմ» ՍՊԸ-ն և «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն («ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն («ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) հայտը գնահատել է հրավերի

պահանջներին անհամապատասխան և մերժել, միաժամանակ «Պրոթերմ» ՍՊԸ-ին ճանաչել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից և առաջարկել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս առաջարկ է ներկայացվել կնքել պայմանագիր:

19.07.2019թ.-ին «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին է ներկայացվել իր իսկ կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն կատարել է N4 տուրբոագրեգատի խտացուցիչների հովացման խողովակների փորձնական (ստուգողական) բարձր ճնշումային մաքրում և մաքրման արդյունքում արձանագրվել է առաջացած լուծույթում չլուծվող նստվածքների բացակայություն, որն էլ հիմք է հանդիսացել ««ՀԱԷԿ» ՓԲԸ N4 տուրբոագրեգատի Կ-12900 տեսակի 4 Ա,Բ խտացուցիչների, N3 և N4 տուրբոագրեգատների ՄԲ-90-135 տեսակի ՄՕ 1÷4 յուղահովացուցիչների և 2ՊԷՀ-1÷5 սնուցող պոմպերի ՄՀ-5 տեսակի յուղահովացուցիչների խողովակների ներքին շերտի մաքրում բարձր ճնշան պոմպով» ծառայության ձեռքբերման գործընթացը դադարեցնելու և դրա փոխարեն կայանի անձնակազմի օգնությամբ իրականացնելու խտացուցիչների լվացում՝ խնայելով 28 990 000 (քսանութ միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2019թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն տնօրենի թիվ 1062 առ 02.08.2019թ.-ի հրամանը, «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-32/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ Օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուն N4 տուրբոագրեգատի խտացուցիչների հովացման խողովակների փորձնական (ստուգողական) բարձր ճնշումային մաքրման արդյունքում արձանագրելով, որ առաջացած լուծույթում չլուծվող նստվածքներ առկա չեն և հնարավոր է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի անձնակազմի օգնությամբ իրականացնել խտացուցիչների լվացում՝ գնման առարկան հանդիսացող ծառայության ձեռքբերման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ այդպիսի ծառայության ձեռքբերման անհրաժեշտության վերացման հիմքով:

Ըստ էության ոչ միայն դադարել է գոյություն ունենալ գնման պահանջը, այլ նաև փոխվել է այն իրավիճակը, որում արվել էր պայմանագիր կնքելու առարջարկը՝ օֆերտան:

Իսկ ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Պատվիրատուի ոչ թե տնօրենը պետք է ընթացակարգի չեղյալ հայտարարման հրաման կայացներ, այլ ժողովը, քանի որ ինչպես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն է սահմանում՝ ժողովն է Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը, իսկ Կարգի 58-րդ կետի համաձայն՝ … գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել … ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի որոշման հիման վրա, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ՝

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետի համաձայն՝ ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը)՝ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գործարքներ կնքելու (գործարքներ կնքելուն/չեղարկելուն ուղղված որոշումներ կայացնելու) իրավասության՝ օրենքի ուժով տնօրենին վերապահված լինելու պայմաններում, ակնհայտ է, որ վերջինս է հանդիսանում այն ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարը, ով իրավասու է ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում կայացնել, որպիսի պայմաններում «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, այս հիմքով ևս, ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից 05.08.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/58 բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**